Դեպի Հյուսի՞ս, թե՞ Արևմուտք դիրքորոշումներ.

հասարակական կարծիքի ուսումնասիրությունների արդյունքներ

Կրկնվող հետազոտության համեմատական տվյալներ 2014-2017 թթ. և 2019 թ.

2019 թ.-ի մայիսին Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքով (Երևան քաղաքում և բոլոր մարզերում) Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը «Հասարակական հետազոտությունների առաջատար խումբ» հասարակական կազմակերպության (APR Group) ներգրավմամբ իրականացրել է սոցիոլոգիական հետազոտություն, որի խնդիրներից մեկը եղել է պարզել հասարակության դիրքորոշումները միջազգային կառույցների՝ Եվրոպական կառույցների (Եվրամիության) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) հանդեպ, այլ կերպ՝ ՀՀ բնակչության նախապատվությունները դեպի Հյուսիս կամ Արևմուտք՝ Հայաստանի Հանրապետության կողմնորոշման վերաբերյալ:

Հետազոտությունն իրականացվել է 1200 հոգու շրջանում (95% վստահության միջակայքում, ±2.8% սխալի մեծությամբ), կիսաստանդարտացված հարցազրույցների մեթոդով՝ CAPI-ի տեխնիկայի կիրառմամբ: 2019 թ. ստացված տվյալները համեմատվել են նախորդ չորս տարիներին (2014-2017 թթ.) իրականացված նմանատիպ հետազոտությունների արդյունքների հետ:

Միջազգային կառույցներին Հայաստանի Հանրապետության ցանկալի անդամակցության վերաբերյալ հարցվածների կարծիքները բաշխվել են հետևյալ կերպ՝ 30%-ն այն կարծիքին է, որ Հայաստանի Հանրապետությունը պետք է անդամակցի Եվրոպական կառույցներին (Եվրամիությանը՝ ԵՄ), 20%-ը՝ Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ), 30%-ը՝ և՛ Եվրամիությանը, և՛ ԵԱՏՄ-ին, իսկ 6%-ը դեմ է արտահայտվել նշված կառույցներից որևէ մեկին Հայաստանի Հանրապետության անդամակցությանը: Այս հարցին դժվարացել է պատասխանել հարցվողների 14%-ը:

Համեմատական անցկացնելով նախորդ չորս տարիների նմանատիպ հետազոտությունների արդյունքների հետ՝ նկատելի է, որ միջազգային կառույցներին Հայաստանի Հանրապետության ցանկալի անդամակցության վերաբերյալ հարցվածների նախապատվություններում տեղի են ունեցել փոփոխություններ: Արդյունքները ներկայացված են Գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1.
2014-2017 թթ. և 2019 թ. ՀՀ բնակչության կարծիքը միջազգային կառույցներին՝ Հայաստանի Հանրապետության անդամության վերաբերյալ



Գծապատկեր 1-ից պարզ է դառնում, որ 2019թ.-ին 2017 թ.-ի համեմատ նվազել են թե ԵՄ-ի և թե ԵԱՏՄ-ի անդամության կողմնակիցների թվերը, սակայն ինչպես տեսնում ենք, ԵՄ-ի անդամության կողմնակիցների թիվն ավելի քիչ է նվազել՝ 3%-ով, 33%-ից դառնալով 30% (նշենք, որ հետազոտության սխալի մեծությունը կազմում է ±2.8%), իսկ ԵԱՏՄ-ի կողմնակիցների թիվը նվազել է ավելի մեծ չափով՝ 12%-ով, 32%-ից դառնալով 20%: Ուշագրավ է, որ ի տարբերություն 2017 թ.-ի՝ 2019 թ.-ին գրեթե կրկնակի աճել է երկու կառույցներին (ԵՄ և ԵԱՏՄ) միաժամանակ անդամության կողմնակիցների թիվը՝ 12%-ից 30%:

Այսպիսով, հինգ տարիների հետազոտությունների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ միայն 2014 թ. և 2015 թ.-ին է ԵՄ անդամության կողմնակիցների թիվը ավելի քիչ է եղել ԵԱՏՄ-ի անդամության կողմնակիցների թվից: 2016թ.-ից ԵՄ-ի անդամության կողմնակիցների թիվն ավելին է եղել, քան ԵԱՏՄ-ինը, որը պայմանավորված էր 2016թ. ապրիլյան պատերազմական գործողությունների հետ կապված հանրային ընկալումներում՝ Ադրբեջանին ռուսական զենքի մեծածավալ վաճառքի փաստի հետ:

ՌԴ-ի նկատմամբ հանրային ընկալման փոփոխության մասին է վկայում 2016 թ., 2017թ. և 2019 թ. արված ուսումնասիրությունների արդյունքների համեմատությունն այն հարցի շուրջ, թե ըստ հարցվողների, Ռուսաստանի Դաշնությունն ինչպիսի

վերաբերմունք ունի ՀՀ նկատմամբ՝ ոչ բարեկամական (թշնամական), թե՝ բարեկամական (Տես Գծապատկեր 2):

Գծապատկեր 2.
ՌԴ ՀՀ-ի հանդեպ վերաբերմունքը ըստ հարցվածների 2016-2017թթ. և 2019թ.



Կրկնվող հետազոտությունները հնարավորություն են տալիս բացահայտելու ԵԱՏՄ-ին անդամության կողմնակիցների թվի կապը Հայաստանի Հանրապետության (ՀՀ) հանդեպ Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) վերաբերմունքի հարցի պատասխանների հետ: Ինչպես երևում է Գծապատկեր 3-ից, գոյություն ունի ուղիղ համեմատական կապ ՀՀ-ի նկատմամբ ՌԴ-ի բարեկամական վերաբերմունքի և ԵԱՏՄ-ին անդամության կողմնակիցների թվի միջև:

Գծապատկեր 3. ՀՀ-ի ԵԱՏՄ-ի անդամության կողմնակիցներ ֆ ՌԴ-ի ՀՀ-ի հանդեպ դրական վերաբերմունք



Դիտարկել ենք նաև միջազգային կառույցներին անդամության վերաբերյալ հասարակական կարծիքի տվյալները՝ ըստ ՀՀ-ի նկատմամբ առանձին երկրների վերաբերմունքի վերաբերյալ տվյալների:

Այսպես՝ համաձայն 2019 թ. հետազոտության արդյունքների՝ ԵԱՏՄ առանցքային նշանակություն ունեցող երկրի՝ Ռուսաստանի Դաշնությանը որպես ոչ բարեկամ (թշնամի) երկիր համարողների 44.7%-ը նախապատվություն է տալիս Եվրոպական միությանը ՀՀ-ի անդամությանը, ԵԱՏՄ-ին՝ 6.6%: Ռուսաստանի Դաշնությանը որպես բարեկամ երկիր համարողների 22.1%- ը կողմնակից է ԵԱՏՄ-ին անդամությանը, և 28.6%՝ Եվրամիությանը: Նույն միտումը նկատելի էր նաև 2017թ. իրականացված հետազոտության արդյունքներում (Տես Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ-ի միջազգային կառույցներին նախապատվելի անդամությունը ըստ ՀՀ-ի հանդեպ Ռուսաստանի վերաբերմունքի ընկալման 2016թ., 2017թ. և 2019թ.

		ԵՄ	ԵԱՏՄ	Երկուսին էլ	Ոչ մեկին, ոչ էլ մյուսին	Դժվարանում եմ պատասխանել	Հրաժարվում եմ պատասխանել
2019 թ.	Բարեկամական	28.6%	22.1%	30.0%	4.2%	14.9%	.3%
	Ոչ բարեկամական (թշնամական)	44.7%	6.6%	25.0%	15.8%	7.9%	.0%
	Չեզոք	30.8%	11.5%	15.4%	7.7%	34.6%	.0%
	Դժվարանում եմ պատասխանել	31.2%	16.5%	32.1%	6.8%	12.7%	.8%
2017 թ.	Բարեկամական	31.6%	36.1%	12.2%	8.1%	11.4%	.5%
	Ոչ բարեկամական (թշնամական)	46.8%	14.9%	12.8%	12.8%	10.6%	2.1%
	Չեզոք	34.6%	18.3%	13.0%	16.3%	15.4%	2.4%
	Դժվարանում եմ պատասխանել	27.3%	13.6%	4.5%	13.6%	27.3%	13.6%
2016 թ.	Բարեկամական	39.3%	29.7%	6.0%	5.3%	19.1%	.5%
	Ոչ բարեկամական (թշնամական)	52.9%	9.6%	2.9%	22.1%	12.5%	.0%
	Չեզոք	40.4%	22.1%	5.8%	12.5%	18.9%	.3%
	Դժվարանում եմ պատասխանել	31.6%	15.8%		5.3%	47.4%	.0%

Այսպիսով՝ ակնհայտ է դառնում, որ եթե ԵԱՏՄ-ին ՀՀ-ի անդամության օգտին հանրային կարծիքի վրա էական ազդեցություն ունի ՀՀ-ի նկատմամբ ՌԴ-ի դրական վերաբերմունքը, ապա անկախ ՀՀ-ի նկատմամբ ՌԴ-ի վերաբերմունքի գնահատականների բնույթից հարցվողների մեծամասնությունը նախապատվություն է տալիս ԵՄ-ին ՀՀ-ի անդամությանը:

Հետազոտության տվյալները դիտարկվել է նաև միջազգային կառույցներին Հայաստանի Հանրապետության անդամության նախապատվությունների պատկերը՝ ըստ մարզերի (տես Գծապատկեր 4):

Գծապատկեր 4.
Միջազգային կառույցներին անդամություն՝ ըստ մարզերի (2019թ.)



Ինչպես երևում է Գծապատկեր 4-ից, Եվրամիությանը ՀՀ-ի անդամության կողմնակիցների թիվը ամենամեծն է Արագածոտնի (44%), Վայոց Ձորի (38%), Տավուշի (38%), Արարատի (35%) մարզերի և Երևան (41%) քաղաքի հարցվածների շրջանում: ԵԱՏՄ-ին ՀՀ-ի անդամության նախապատվություն տվողները առավել մեծ թիվ են կազմում Լոռու (36%), Արարատի (33%) և Վայոց Ձորի (33%) մարզի հարցվածների մեջ: Իսկ երկու միջազգային կառույցներին անդամակցելու կողմնակիցների թիվը մեծ է Սյունիքի (69%), Գեղարքունիքի (60%), Շիրակի (56%) և Կոտայքի (41%) մարզերի հարցվածների շրջանում:

Դիտարկելով ըստ մարզերի ԵՄ-ին ՀՀ անդամության վերաբերյալ 2014-2017թթ. և 2019թ. տվյալները կարելի է նկատել մի շարք միտումներ (տես Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Միջազգային կառույցներին անդամություն՝ ըստ մարզերի 2014-2017թթ. և 2019թ.

	ԵՄ անդամակցության կողմնակիցներ՝ ըստ մարզերի և տարեթվերի					ԵԱՏՄ անդամակցության կողմնակիցներ՝ ըստ մարզերի և տարեթվերի					Երկուսին էլ(ԵՄ և ԵԱՏՄ) միաժամանակ անդամակցության կողմնակիցներ՝ ըստ մարզերի և տարեթվերի				
	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.
Երևան	30%	22.00%	41.00%	35.50%	40.50%	30%	34.30%	22.00%	29.50%	20.50%	13%	15.50%	7.00%	11.00%	19.30%
Արագածոտն	20%	18.80%	41.70%	22.90%	43.80%	53%	62.50%	18.80%	18.80%	18.80%	4%	10.40%	6.30%	31.30%	12.50%
Արարատ	16%	28.80%	43.30%	37.50%	34.60%	44%	36.50%	28.80%	35.60%	32.70%	22%	16.30%	3.80%	3.80%	16.30%
Արմավիր	23%	26.00%	35.60%	34.60%	27.90%	45%	23.10%	26.00%	24.00%	16.30%	9%	22.10%	6.70%	23.10%	29.80%
Գեղարքունիք	30%	23.80%	43.80%	18.80%	11.30%	51%	55.00%	28.80%	8.80%	6.30%	2%	5.00%	6.30%	37.50%	60.00%
Լոռի	15%	18.30%	44.20%	32.50%	28.30%	53%	49.20%	35.00%	50.00%	35.80%	12%	7.50%	3.30%	0.80%	21.70%
Կոտայք	19%	25.00%	43.80%	28.60%	18.80%	36%	25.90%	19.60%	38.40%	12.50%	6%	7.10%	2.70%	9.80%	41.10%
Շիրակ	21%	29.50%	39.30%	39.30%	16.10%	39%	33.00%	31.30%	36.60%	6.30%	14%	6.30%	7.10%	5.40%	56.30%
Սյունիք	27%	31.30%	35.40%	16.70%	10.40%	18%	18.80%	29.20%	41.70%	14.60%	25%	10.40%	2.10%	8.30%	68.80%
Վայոց Ձոր	23%	16.70%	37.50%	20.80%	37.50%	41%	37.50%	20.80%	45.80%	33.30%	27%	20.80%	12.50%	25.00%	12.50%
Տավուշ	38%	33.30%	39.60%	43.80%	37.50%	38%	35.40%	16.70%	20.80%	22.90%	4%	12.50%	0.00%	4.20%	14.60%

Այսպիսով՝ դիտարկելով ՀՀ-ի միջազգային անդամության կողմնակիցների թվի փոփոխությունները իրականացված հետազոտությունների ամբողջ ժամանակահատվածի համար (ներկայացված Աղյուսակ 2-ում), նկատելի են հետևյալ օրինաչափությունները. բոլոր մարզերում նկատելի է ԵԱՏՄ-ին ՀՀ-ի անդամության կողմնակիցների թվի նվազման միտումը, որն առավել քիչ է արտահայտված Սյունիքի մարզում: ԵՄ-ին՝ ՀՀ-ի անդամության կողմնակիցների թիվը ըստ մարզերի ունի այլ պատկեր. նկատելի է ԵՄ-ին ՀՀ-ի անդամության կողմնակիցների թվի աճի միտումը, որը առավել ցայտուն արտահայտված է 5 մարզերում (Երևան քաղաք, Արագածոտնի, Արարատի, Լոռու և Վայոց Ձորի մարզեր), իսկ 3 մարզերում (Գեղարքունիքի, Շիրակի և Սյունքի մարզեր) ընդհակառակը, առկա է կողմնակիցների թվի նվազում, ևս 3 մարզերում (Արմավիրի, Կոտայքի և Տավուշի մարզեր) նկատելի է միևնույն մակարդակի պահպանում:

Այսպիսով՝ եթե ԵԱՏՄ-ի ՀՀ-ի անդամության նկատմամբ հանրային վերաբերմունքը 2014-2019թթ. հստակ նվազման միտում ունի գերթե բոլոր մարզերում, ապա ԵՄ-ի ՀՀ-ի անդամության վերաբերյալ մոտեցումները տարբերվում են՝ ըստ մարզերի: Միաժամանակ նշենք. այն մարզերում, որտեղ ուսումնասիրությունների տարբեր տարիների ընթացքում նկատվել է ԵՄ-ին՝ ՀՀ-ի անդամության կողմնակիցների թվի նվազում, ապա այդ նուն մարզերում ԵԱՏՄ-ի ՀՀ-ի անդամության կողմնակիցների թիվը չի աճել, այլ նկատվում է երկու կառույցներին միաժամանակ անդամության կողմնակիցների թվի աճ:

Դիտարկենք նաև միջազագին կառույցներին անդամության նախապատվությունները՝ ըստ հարցվողների բնակության վայրերի տիպի (Գծապատկեր 5):

Գծապատկեր 5. Միջազգային կառույցներին անդամությունն՝ ըստ բնակության վայրի տիպերի



Գծապատկեր 5-ից ակնհայտ է դառնում, որ ԵՄ-ին ՀՀ-ի անդամության կողմնակիցների թիվը դիտարկման տարիների ընթացքում աճելու միտում ունի Երևան քաղաքում և գյուղերում, և նվազման միտում մարզային քաղաքային բնակավայրերում: ԵԱՏՄ-ի պարագայում այդ կառույցին ՀՀ-ի անդամության կողմնակիցների թիվը նվազման միտում ունի բոլոր տիպի բնակավայրերում, սակայն հիմնականում այդ կառույցի կողմնակիցները բնակվում են գյուղական համայնքներում:

Դիտարկելով միջազգային կառույցներին ՀՀ-ի **անդամության** նախապատվությունները ըստ սեռի, ակնհայտ է դառնում, որ դիտարկված ողջ ժամանակահատվածում (2014-2017 թթ. և 2019 թ.) կա հստակ օրինաչափություն. ԵՄ-ին ՀՀ-ի անդամության կողմնակիցները մեծամասամբ իգական սեռի ներկայացուցիչներ են, իսկ ԵԱՏՄ-ին՝ արական սեռի ներկայացուցիչները: Միևնույն ժամանակ ԵԱՏՄ-ին ՀՀ-ի անդամության կողմնակից արական սեռի ներկայացուցիչների թիվը նշված ժամանակահատվածում նվազման միտում ունի (Գծապատկեր 6):

Գծապատկեր 6. Միջազգային կառույցներին անդամությունն՝ ըստ սեռի



Հետաքրքիր է, որ 2019 թ. միջազգային կառույցներին ՀՀ-ի **անդամության** կողմնակիցների «չկողմնորոշվածների» (պայմանականորեն այդպես ենք կոչում այն խմբին, ովքեր գտնում են, որ ՀՀ-ն պետք է անդամակցի և ԵԱՏՄ-ին, և ԵՄ-ին) թվի աճ է գրանցվել 46 և ավելի տարիքային խմբի ներկայացուցիչների մոտ (Տես Աղյուսակ 3): Նշենք նաև, որ տվյալ տարիքային խմբի ներկայացուցիչները նախկինում հիմնականում գերակշռում էին ԵԱՏՄ-ին ՀՀ-ի **անդամության** կողմնակիցների շրջանում:

Համապատասխանաբար ԵԱՏՄ-ին անդամակցության կողմնակիցների թվի նվազումը առավել շատ տեղի է ունեցել տվյալ տարիքային խմբի ներկայացուցիչների շրջանում և 36-45 տարիքային խմբի ներկայացուցիչների մոտ: ԵՄ-ին ՀՀ-ի **անդամության** կողմնակիցները միշտ ամենաքիչն են եղել 46 և ավելի տարիքային խմբում, այլ տարիքային խմբերի համեմատ: Նշենք նաև, որ ԵՄ-ին ՀՀ-ի **անդամության** կողմնակիցների թիվը բոլոր տարիքային խմբերում 2014թ. համեմատ 2019-ի աճել է:

Աղյուսակ 3

Միջազգային կառույցներին անդամություն ըստ տարիքային խմբերի

	ԵՄ					ԵԱՏՄ					Երկուսին էլ				
	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.
18 -25 տարեկան	34%	41%	45.5%	45.0%	37.1%	38%	28%	24.7%	22.5%	15.2%	11%	10%	4.5%	12.6%	26.5%
26 -35 տարեկան	32%	28%	41.6%	33.5%	35.7%	33%	29%	22.9%	27.7%	17.2%	12%	9%	5.3%	15.0%	27.1%
36 – 45 տարեկան	27%	28%	44.9%	36.2%	35.2%	41%	34%	22.2%	27.6%	19.8%	11%	9%	4.5%	9.5%	23.3%
46 – 60 տարեկան	21%	20%	41.8%	30.9%	27.0%	41%	41%	26.3%	34.4%	19.8%	12%	15%	4.4%	12.5%	34.1%
61 և ավելի տարեկան	17%	17%	33.5%	24.7%	22.9%	37%	41%	28.9%	40.5%	23.2%	13%	16%	8.4%	11.1%	33.3%

Աղյուսակ 4

Միջազգային կառույցներին անդամություն ըստ կրթության

	ԵՄ				ԵԱՏՄ				Երկուսին էլ			
	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.
Տարրական	0%	0%	38%	20%	67%	40%	50%	10%	0%	0%	0%	20%
Թերի միջնակարգ (8-ամյա)	17%	29%	18%	14%	39%	29%	35%	29%	11%	1%	7%	16%
Միջնակարգ (10-12-ամյա)	25%	41%	32%	36%	38%	25%	32%	20%	9%	4%	9%	24%
Միջնակարգ մասնագիտական (տեխնիկում)	22%	42%	34%	25%	33%	22%	33%	21%	15%	6%	12%	34%
Թերի բարձրագույն	46%	45%	41%	25%	21%	29%	33%	19%	15%	2%	12%	35%
Բարձրագույն	26%	43%	33%	31%	39%	26%	29%	17%	15%	8%	19%	36%
Ետբուհական (գիտական աստիճան)	38%	60%	40%	29%	13%	0%	0%	43%	0%	20%	20%	14%

Աղյուսակ 5

Միջազգային կառույցներին անդամություն ըստ հարցվողների ընտանիքի միջին ամսական եկամտի												
	ԵՄ				ԵԱՏՄ				Երկուսին էլ			
	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.
Մինչև 35000 դրամ	19%	42%	27%	25%	38%	25%	27%	25%	11%	4%	19%	28%
35001-ից մինչև 65000 դրամ	21%	38%	33%	25%	40%	28%	36%	23%	11%	4%	8%	29%
65001-ից մինչև 150000 դրամ	24%	42%	33%	29%	36%	25%	34%	20%	14%	6%	10%	33%
150001-ից մինչև 350000 դրամ	29%	43%	38%	38%	32%	22%	30%	17%	12%	7%	13%	26%
350001 դրամից ավելին	38%	44%	46%	35%	31%	23%	28%	18%	13%	13%	10%	26%

Դիտարկելով ՀՀ-ի միջազգային կառույցներին անդամության նախապատվությունները, ըստ հարցվողների կրթական մակարդակների, նկատվում են հետևյալ միտումները (Աղյուսակ 4): ԵՄ-ին անդամակցելու կողմնակիցների աճելու միտումը (2015-2017թթ. և 2019թ. ընթացքում) առկա է 3 կրթական խմբերում (տարրական, միջնակարգ (10-12-ամյա), միջին մասնագիտական (տեխնիկում) և բարձրագույն), իսկ թվերի նվազման միտումն առկա է 3 այլ կրթական խմբերում՝ թերի միջնակարգ (8-ամյա), թերի բարձրագույն և հետբուհական (գիտական աստիճան): ԵԱՏՄ-ին ՀՀ-ի անդամության կողմնակիցների թվերում տեղի են ունեցել նվազումներ բոլոր կրթական խմբերում, առավել կտրուկ նվազումը տեղի է ունեցել տարրական կրթություն ունեցողների խմբում:

Ինչ վերաբերվում է ՀՀ-ի՝ միջազգային կառույցներին անդամության նախապատվություններին, ըստ հարցվածների միջին ամսական եկամտի, ապա պատկերը հետևյալն է՝ ԵՄ-ին անդակցելու կողմնակիցների թիվը բարձր է բոլոր խմբերում՝ բացառությամբ «350001 դրամից ավելին» խմբի շրջանում (տես Աղյուսակ 5): ԵԱՏՄ-ին ՀՀ-ի անդամության կողմնակիցների թիվը նվազել է բոլոր եկամտային խմբերում:

Այպիսով՝ դիտարկելով 2014-2017 թթ. և 2019 թ. հետազոտությունների արդյունքները, առանձնացնենք Եվրամիությանն ու Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամության կողմնակիցների ընդհանրական բնութագիրը (իդեալական տիպերը)՝ ըստ հարցվածների սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների (Տես Աղյուսակ 6):

Աղյուսակ 6. Միջազգային կառույցներին ՀՀ-ի անդամության կողմնակիցների սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչներ 2019թ.-ին

բնութագրիչի անվանումը	Եվրամիություն	Եվրասիական տնտեսական միություն
Տարիք	18-45 տարեկան	61 տարեկանից բարձր
Սեռ	Իգական	Արական
Բնակավայրի տիպ	Երևան քաղաք	Գյուղական
Ընտանիքի միջին ամսական եկամտի չափ	65.001 դրամից ավել	Մինչև 35.000դրամ

Այսպես՝ Եվրամիությանը ՀՀ-ի անդամության կողմ են մեծամասամբ 18-45 տարեկան, իգական սեռի ներկայացուցիչներ, որոնք բնակվում են մայրաքաղաքում[1] և նրանց ընտանիքի միջին ամսական եկամտի չափը բարձր է 65.001 դրամից:

ԵԱՏՄ-ին ՀՀ-ի անդամությանը ավելի շատ նախապատվություն են տալիս 61 տարեկանից բարձր[2], արական սեռի ներկայացուցիչները, որոնք բնակվում են գյուղական բնակավայրերում և նրանց ընտանիքի միջին ամսական եկամտի չափը ցածր է 35.000 դրամից:

Մեր կարծիքով, ավելի բարձր տարիքային խմբերի ներկայացուցիչները, ապրելով ԽՍՀՄ ժամանակաշրջանում, կողմ են արտահայտվում ԵԱՏՄ-ի ՀՀ-ի անդամությանը, դրանով իսկ արտահայտելով անցյալի վերականգնման իրենց ձգտումները, ընդ որում՝ որքան մեծանում է հարցվողների տարիքը, այնքան ավելի շատ է նրանց թիվը ԵԱՏՄ-ին ՀՀ-ի անդամության կողմնակիցների մեջ: Ինչ վերաբերում է նախապատվությունների տարբերություններին, հավանական է, որ դրանք պայմանավորված են բնակչության միգրացիոն միտումների տարբերությամբ. գյուղական և մարզային քաղաքային համայնքների բնակչությունը մեծամասամբ մեկնում է Ռուսաստանի Դաշնություն՝ արտագնա աշխատանքի, ուստի՝ ավելի շատ են հակված ԵԱՏՄ-ին ՀՀ-ի անդամությանը:

Այսպիսով՝ 2014-2017 թթ.-ի համեմատ 2019 թ.-ին ՀՀ-ի անդամության վերաբերյալ նախապատվություն տվողների սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչներով առանձնացված խմբերում տեղի ունեցած հիմնական փոփոխություններն են.

- ԵՄ-ին և ԵԱՏՄ-ին՝ ՀՀ-ի անդամության կողմնակիցների եկամտային խմբերի փոփոխությունը. ԵԱՏՄ-ին ՀՀ-ի անդամության կողմնակիցների մեջ մեծամասնություն են սկսել կազմել միայն մինչև 35.000 դրամ ընտանիքի միջին ամսական եկամուտ ունեցողների խմբի ներկայացուցիչները, իսկ ԵՄ-ին ՀՀ-ի անդամության կողմնակիցների մեջ՝ 35.001 դրամից ավել ընտանիքի միջին ամսական եկամուտ ունեցողների խմբի ներկայացուցիչները: Այդպիսով՝ ԵԱՏՄ-ին ՀՀ-ի անդամության կողմնակիցների հիմնական մասը կազմում են ամենացածր եկամտային խմբին պատկանողները:
- ԵԱՏՄ-ի ՀՀ-ի անդամության կողմնակիցների թվում տեղի է ունեցել տարիքային խմբի աճ՝ 61 տարիքից բարձր:
- ԵՄ-ի ՀՀ-ի անդամության կողմնակիցների թվում նվազել են մարզային քաղաքային բնակավայրերի հարցվողները, և դրան հակառակ, այդ խմբի

[1] 2014-2017թթ. տվյալների համաձայն ԵՄ-ի անդամության կողմնակիցները նախկինում բնակվում էին նաև մարզային քաղաքներում:
[2] 2014-2017թթ. տվյալների համաձայն ԵԱՏՄ-ի անդամության կողմնակիցները 46-60 տարիքային խմբի ներկայացուցիչներն էին հանդիսանում:

հարցվողներն ավելի շատ արտահայտվել են կողմ երկու կառույցներին միաժամանակյա անդամակցությանը (պայմանականորեն՝ «չկողմնորոշվածներ» խումբը):

Հարկ ենք համարում նշել, որ բոլոր հետազոտությունների ընթացքում էլ դրսևորվում է նշանակալի կապ Եվրամիության /ԵԱՏՄ կողմնորոշումների և քաղաքական իրադարձությունների վերաբերյալ հարցվողների տեղեկատվություն ստանալու աղբյուրների միջև (Գծապատկեր 7): 2019 թ.-ի հետազոտության արդյունքները որոշակիորեն տարբերվում են 2017 թ.-ի հետազոտության արդյունքներից:

Գծապատկեր 7. Միջազգային կառույցներին անդամությունն՝ ըստ քաղաքական իրադարձությունների վերաբերյալ տեղեկատվություն հիմնական աղբյուրների 2017թ և 2019թ.



Այսպես՝ եթե 2017 թ.-ին հեռուստատեսությունը որպես տեղեկատվության ստացման հիմնական աղբյուր նշողների 28.0%-ը նախապատվություն են տալիս Եվրամիությանը ՀՀ-ի **անդամությանը**, իսկ 35.2%-ը՝ ԵԱՏՄ-ին, ապա 2019թ.՝ նույն հարցվողների խմբի 30.7% կողմ են, որ Հայաստանը անդամակցի երկու կառույցներին, 25.3%՝ ԵՄ-ին, իսկ 22%-ը՝ ԵԱՏՄ-ին: 2017 թ.-ին տպագիր մամուլը որպես տեղեկատվության ստացման հիմնական աղբյուր նշողների 50.0%-ը նախապատվությունը տալիս է Եվրամիությանը և ոչ ոք չի նշել ԵԱՏՄ-ին, իսկ 2019 թ.-ի

հետազոտության տվյալներով, տվյալ խմբի ներկայացուցիչների 42.9%-ը նախապատվություն տալիս է ԵՄ-ին և երկու կառույցներին, իսկ 14.3%-ը՝ ԵԱՏՄ-ին:

Եթե 2017 թ. առցանց մամուլից տեղեկություն ստացողների 37.5%-ը նախապատվություն տալիս է Եվրամիությանը, իսկ 28.2%-ը՝ ԵԱՏՄ-ին, ապա 2019 թ.՝ 37.3%-ը նախապատվություն տալիս է երկուսին էլ անդամակցելուն, 27.5%-ը՝ ԵՄ-ին, 15.5%-ը՝ ԵԱՏՄ-ին: 2017 թ. սոցիալական կայքերը որպես տեղեկատվության ստացման հիմնական աղբյուր նշողների 43.6%-ը նախապատվություն տալիս է Եվրամիությանը անդամության, իսկ 27.7%-ը՝ ԵԱՏՄ-ին, իսկ 2019 թ. 37.9%-ը՝ ԵՄ-ին, 26.5%՝ երկուսին էլ, իսկ 17.9%-ը՝ ԵԱՏՄ-ին:

Այսպիսով, եթե 2017թ. իշխանությունների կողմից վերահսկվող առավել լայն լսարան ունեցող տեղեկատվության աղբյուրից՝ հեռուստատեսությունից տեղեկություններ ստացողների թվում գերակշռում են ԵԱՏՄ-ին՝ ՀՀ-ի անդամության կողմնակիցները, իսկ իշխանության կողմից քիչ վերահսկվող տեղեկատվության աղբյուրից՝ սոցիալական կայքերից տեղեկատվություն ստացողների թվում գերիշխում են Եվրամիության անդամակցության կողմնակիցները, ապա 2019 թ.-ին պատկերը *փոփոխվել* է: Հաշվի առնելով իշխանական ուժի փոփոխությունը, հեռուստատեսությունն այժմ ներկայացնում է նոր իշխանության տեսակետներն, ուստի՝ «և ԵՄ-ին, և ԵԱՏՄ-ին» անդամության կողմ արտահայտվածների թվի մեծացման հավանական պատճառներից է նաև դա:

2017 թ.-ին իրականացված հետազոտության տվյալներով ՀՀ-ի միջազգային կառույցներին անդամության նախապատվությունների վրա որոշակի ազդեցություն ուներ նաև Հայաստանի Հանրապետության հանդեպ այդ կառույցների անդամ պետությունների ունեցած վերաբերմունքը՝ ըստ հարցվողների: Կապն ուսումնասիրվել է նաև 2019 թ.-ին:

Հայաստանի Հանրապետության հանդեպ առավել բարեկամաբար տրադրված են համարվում հետևյալ հինգ պետությունները՝ Ֆրանսիան (2019 թ.՝ 87.5%, իսկ 2017 թ.՝ 77.9%), Ռուսաստանը (2019 թ.՝ 71.8%, իսկ 2017 թ.՝76.9%), Գերմանիան (2019 թ.՝ 65.6%, իսկ 2017 թ.՝48.8%), Հնդկաստանը (2019թ.՝ 62.2%, իսկ 2017 թ.՝ 46.8%) և Պարսկաստանը (2019 թ.՝59.2%, իսկ 2017 թ.՝ 51.8%): Ինչպես տեսնում ենք, 2019 թ.-ին բոլոր երկրների առնչությամբ էլ աճել են դրական վերաբերմունք ակնկալողների տոկոսները, բացառությամբ Ռուսաստանի, որտեղ այդ տոկոսը նվազել է:

Եթե մինչև 2017 թ. ներառյալ իրականացված հետազոտությունների մասնակցած հարցվողների միգարցիոն տրամադրությունները ազդեցություն ունեին ՀՀ-ի միջազգային կառույցներին անդամության կողմնորոշումների վրա, ապա 2019թ. իրականացված հետազոտության տվյալներով նման միտում չի դրսևորվել: Գծապատկեր 8-ում

ներկայացված են հարցվողների միգրացիոն մտադրությունները՝ ըստ տարիների: Ինչպես տեսնում ենք, 2019թ.-ի հետազոտության արդյունքներով արտագաղթել ցանկացողների տոկոսը կտրուկ նվազել է, իսկ չցանկացողների տոկոսը՝ աճել[3]:

Գծապատկեր 8. Միգարցիոն տրամադրություններ 2014-2019թթ.*



Այսպես՝ 2017 թ. հետազոտության տվյալները ցույց էին տալիս, որ Եվրամիությանը ՀՀ-ի անդամության կողմնակիցների թվում գերակշռում էին արտագաղթելու ցանկություն հայտնողները. «միանշանակ այո»՝ 42.3%, «հավանաբար այո»՝ 19.9%, ընդամենը 62.2%: Արտագաղթելու ցանկություն չհայտնողները կազմել էին ընդամենը 37.2%: ԵԱՏՄ-ի ՀՀ-ի անդամության կողմնակիցների թվում արտագաղթելու մտադրություն ունեցողները («միանշանակ այո»՝ 34.9%, «հավանաբար այո»՝13.9%, ընդամենը՝ 48.8%) և չունեցողները («միանշանակ ոչ»՝ 40.7%, «հավանաբար ոչ»՝ 10%, ընդամենը՝ 50.7%) մոտավորապես հավասար են: 2017 թ.-ին արվել էր եզրահանգում, որ *Եվրամիության անդամակցության կողմնակիցներն ավելի մեծ չափով են հակված արտագաղթելու*: Գծապատկեր 9-ում ներկայացված են 2019 թ.-ի հետազոտության տվյալները, որտեղ երևում է, որ **չկա հստակ կապ արտագաղթելու մտադրության և նախընտրելի անդամության միջև, ինչպես նաև այն, որ 2017 թ.-ին արված եզրահանգումը ճիշտ չէ 2019 թ.-ի համար**:

[3] Հարց. «Եթե ունենայիք հնարավորություն, արդյոք կմեկնեի՞ք Հայաստանից դուրս մշտական բնակության»:

Գծապատկեր 9. Անդամություն և միգրացիոն միտումներ (2019 թ.)



Դիտարկելով երկրի ապագայից սպասումների փոփոխությունը տարիների կտրվածքով՝ տեսնում ենք, որ 2019 թ.-ին լավատեսների տոկոսը զգալիորեն բարձրացել է, ի հակակշիռ վատատեսների (Տես՝ Գծապատկեր 10)[4]:

Գծապատկեր 10. Հայաստանի ապագան *



Վերջին երկու հարցերի պատասխանների 2019 թ. փոփոխությունները, ըստ մեզ, ուղղակի կապված են 2018 թ.-ին Հայաստանում տեղի ունեցած հասարակաքաղաքական իրադարձությունների և այդ իրադարձությունների հասարակական ընկալումների հետ:

[4] Հարց. «Ինչպե՞ս եք տեսնում Հայաստանի ապագան»:

Դիտարկելով երկրի ապագայից սպասումների և ՀՀ-ի նախընտրելի անդամության հարցերի խաչաձև վերլուծությունները՝ ակնհայտ է դառնում , որ ՀՀ-ի երկու միջազգային կառուցների անդամության կողմնակիցների գերակշռող մասը 2019թ. լավատես է երկրի ապագայի հարցում՝ ի հակառակ 2016 և 2017 թթ. արդյունքների, որտեղ գերակշռում էր հոռատեսների թիվը (Աղյուսակ 7):

Աղյուսակ 7

Միջազգային կառույցներին անդամություն՝ ըստ ՀՀ-ի ապագայի նկատմամբ դիրքորոշումների

		Ինչպե՞ս եք տեսնում Հայաստանի ապագան:								
		2016թ.			2017թ.			2019թ.		
		Գնալով վիճակն ավելի լավանում է	Ոչինչ չի փոխվում	Գնալով վիճակն ավելի վատանում է	Գնալով վիճակն ավելի լավանում է	Ոչինչ չի փոխվում	Գնալով վիճակն ավելի վատանում է	Գնալով վիճակն ավելի լավանում է	Ոչինչ չի փոխվում	Գնալով վիճակն ավելի վատանում է
Ի՞նչ եք կարծում, Հայաստանը պե՞տք է անդամակցի...	ԵՄ	7.1%	22.8%	70.1%	13.5%	34.4%	52.0%	70.7%	21.3%	**8.0%**
	ԵԱՏՄ	5.6%	23.8%	70.6%	21.5%	32.0%	46.5%	54.4%	30.0%	**15.6%**
	Երկուսին էլ	16.7%	27.3%	56.1%	23.1%	38.1%	38.8%	73.1%	21.3%	5.6%
	Ոչ մեկին, ոչ էլ մյուսին	4.6%	18.3%	77.1%	11.9%	28.0%	60.2%	63.6%	25.8%	10.6%
	Դժվարանում եմ պատասխանել	7.6%	20.4%	72.0%	16.9%	36.5%	46.6%	64.7%	28.3%	6.9%
	Հրաժարվում եմ պատասխանել	20.0%	20.0%	60.0%	14.3%	42.9%	42.9%	60.0%	40.0%	0.0%
Ընդամնը		7.2%	22.4%	70.4%	17.5%	33.8%	48.7%	66.9%	24.3%	8.8%

Ընդ որում՝ ՀՀ-ի՝ ԵԱՏՄ-ին անդամության կողմնակիցների շրջանում հոռետեսների թիվն ավելին է ԵՄ-ի անդամության կողմնակիցների համեմատ:

Համապատասխանաբար նույն միտումն առկա է նաև լավատեսների շրջանում՝ ՀՀ-ի՝ ԵԱՏՄ-ին անդամության կողմնակիցների շրջանում լավատեսների թիվն ավելի փոքր է ԵԱՏՄ-ի անդամության կողմնակիցների թվի համեմատ: